600.0041.16.02.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

16 փետրվարի 2017 թվականի №41Ա
ք.Երևան

«ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎՐԱՍՏԱՆԻՑ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ՆԵՐԿՐՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 23-րդ, 32-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 2-ի №339Ն որոշումը և հաշվի առնելով «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի փետրվարի 16-ի հայտը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել Վրաստանից էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման լիցենզիա՝ մինչև 2018 թվականի փետրվարի 16-ը գործողության ժամկետով:

2. Հաստատել «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերության Վրաստանից էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
16 փետրվարի 2017թ.
ժամը 17[00]